

ԿՈՄԻՏԱՍԻՆ

«Երկինքն ամպել է, գետինը թաց է»,
Անծրե՛ն է երգում, թէ քնարը թո՛,
Քնարիդ երգով իջաւ երեկոն,
Ու երգիդ առաջ իմ սիրտը բաց է :

Դու ի՛նչ կ'անէիր՜էլ ուրիշ քնար,
Երբ մատնեբուդ տակ սիրտն իմ աշխարհի
Երգում է այնքա՛ն, այնքան քնքշաբար,
Որ քնքշանում է եւ սիրտը քարի :

ԱՂԱԽՆԻ

ՀԱՅՐԵՆԻ ԶՐԵՐԸ

Հայրենի ջրե՛ր ... դաշտում շու՜ժորում,
Յաւերժ կարկաչով խօսում է՛ն՜նրանք,
Երանի՛ նրան ով հուն՜է փորում,
Որ մենք այդ հունով երգենք ու գնանք :

— Երանի՛ նրան, ով արդար ծեռքով
Փորել է այս խոր ջրանցքն ու առուն,
Որ մենք կարկաչենք յաւերժի երգով,
Եւ բերենք մեզ հետ վարդեր ու զարուհի :

Երանի՛ նրանց, որ սրտով զուարթ
Դեռ նոր պիտի գան, նոր հուններ փորեն,
Որ մենք մտնելով նոր պարտէ՛զ ու արտ՝
Դառնանք ողկոյզներ եւ ոսկի ցորեն :

Երանի՛ եւ բեզ, որ մեր եզերքին
Կանաչ խնդութիլն, սէր պիտի երգես ...
Թէ երգդ էլ նման լինի մեր երգին՝
Երանի՛ եւ բեզ, հազար երանի :

ՍՈՒՐԷՆ ՎԱՀՈՒՆԻ

